



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 օգոստոսի 2011 թվականի N 1093 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ պետական կառավարչական հիմնարկներն իրենց իրավասությունների սահմաններում ընթացիկ աշխատանքներում տվյալների հավաքագրման, մշակման և օգտագործման ընթացքում ղեկավարվում են բացառապես Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության դասակարգիչ հաստատելու մասին» N 372-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակների դասակարգչով:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (համաձայնությամբ) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում պաշտոնական ինտերնետային կայքերի, մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներով համատեղ իրականացնում են միջոցառումներ՝ ուղղված տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի գործնական կիրառման վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին իրազեկելուն:

3. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրության ծառայությունը վերահաշվարկում է ժամանակագրական (պատմական) շարքերը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության դասակարգիչ հաստատելու մասին» N 372-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին համապատասխան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. օգոստոսի 9
Երևան